




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՑԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԹՅԱՆ



ՀԱՏՈՒ 1



ԳԵՅԱՍԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՅԷ 79

1994 Վ. ՊՐԵՍՏ

891 - 99

S - 47

891.99

S-47

Ux-

91

6 NOV 200

ՀԱՅԱՆ ՏԵՐՅԱՆ

Handwritten signature

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



zusnr. I



8055

№ 75 ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ № 75
1924 Վ. ՊՈԼԻՍ

22.08.2013

58518

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ
1924



ՄԹՆՃԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻ

ՄԹՆՃԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ

1 ՏԽՐՈՒՅՑՈՒՆ

¹ Սահուն քայլերով, աննշմար, վորպես քնքույշ մութի թեւ,
մի ըստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով,
երկնաժամին, թփերն որորող հովի պես թեթեւ
մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...

⁵ Արծակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շնչաց,
կարծես թե սիրո քնքույշ խոսք ասաց նիրհող դաշտերին.—
ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
յեւ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

1908

2 ԵՍՏՈՆԱԿԱՆ ՅԵՐԳ

⁴ Յերբ կրհոգնես, կըզազագես աշխարհից՝
դարձի՛ր իմ մոտ, վերադարձի՛ր դու նորից.—
ցաված սիրտս միշտ քեզնով ե շնչել՝
չի կամենալ նա վերստին քեզ տանջել:

⁵ Յեթե բախտն ու վայելքները քեզ ժպտան,
ոտար մարդիկ քեզ սիրաբար փոշոլոյն տան,
գուցե յես լամ բախտիդ համար, իմ անգին,
սակայն դարձի՛ր, վերադարձի՛ր դու կրկին:

¹⁰ Յեթե հեռվում հակատագիրն անհոգի
սիրտդ մատնե անկարեկից տանջանքի,
ո, գիտեցիր, իմ հոգին ել կցավի
անմխիթար մորմոքումից քո ցավի...

1906

3 ԱՇՈՒՆ

¹ Դալուկ դաշտեր, մերկ անտառ...
—Մահացողի տխուր կյանք.
անձրեւ, քամի, սեւ կամար...
—Սրտակտուր հեկեկանք:

⁵ Միգում շողաց մի ցուրտ լույս.
—ո, արդյոք կա՞ վերադարձ.—
մահացողի անզոր հույս,
վհատ սրտի տխուր հարց...

¹⁰ Անուժ ցավի ցուրտ կապար...
Մահացողի տխուր կյանք.
—անմխիթար, անսպառ
վհատության հեկեկանք...

1906/7

⁴ Աստղերն են ժպտում լուսեղեն նազով,
խաղաղ դաշտերը մութն և համբուրում.
—յես կախարդված եմ միշտ նույն յերազով,
միշտ նույն ցնորքն և իմ սիրտը այրում:

⁵ Մոտեցած յերկնից աստղերը պայծառ
ժպտում են խաղաղ քո աչքերի պես.—
—իմ լքված սրտի կարոտը անծայր
ամեն ինչի մեջ փորձնում և բեզ...

1905

⁴ Սարի հետեւում շողերը մեռան,
անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ.
տխուր յերեկոն զարկել և վրան.
—սիրտս կարոտով կանչում և քեզ՝ յեկ:

⁵ Խորհրդավոր և յերկինքն երազուն.
վարսաթափ ուտի, դողդոջո՞ւն յեղեգ.
արծաթ խոսքերով աղբյուրն և խոսում.
—սիրտս կարոտով կանչում և քեզ՝ յեկ:

¹⁰ Ծաղիկներն ահա քնքույշ փակվեցին,
բացվեցին յերկնի ծաղիկներն անհաս.
սեվ տազնապները իմ սիրտը լցրին.
—արդյոք ո՞ւր ես դու, իմ անուշ յերազ:

¹⁵ Սիրտ իմ, այդ ո՞ւմ ես դու իզուր կանչում,
տես՝ զիշերն անցավ, աստղերը մեռան,
մենավոր իմ սիրտ, մոլորված թռչուն,
կարոտիդ կանչը չի հասնի նրան...

1908

¹ Յեւ մոռացված յեւ անմոռաց հեքյաթներ,
լույս հնչյուններ, վոր դողում են աշխարհում,
քնքույշ աստղեր, վոր վառվում են ու մարում.
—կյանքս, նա յեւ մի լուսեղեն հեքյաթ եր...

⁵ Ճառագայթներ, վոր շողացին ու չկան,
մթնշաղի ուրվագծեր նրբահյուս.
կյանքս, հեռվում անհայտ կորած մի հեզ լույս,
վոր չի վառում վոչ անցյալը, վոչ ներկան:

¹⁰ Հեռաձայն անհայտներում պահված
գալիք որերն անհուն, անտես խավարում.
—կյանքս հավետ քեզ անծանոթ տաճարում
կանթեղի պես առկայծում ե քո դիմաց...

1905

Կախարդական մի շղթա կա յերկնքում՝
աներեւոյթ, վորպես ցավը խոր հոգու.
իջնում ե նա հուշիկ, վորպես իրիկուն,
ողակելով լույս աստղերը մեկ-մեկու:

⁵ Մեղմ գիշերի գեղազանգուր յերագում՝
այն աստղերը, վորպես մոմեր սրբազան,
առկայծում են կարոտագին, յերագուն՝
հավերժաբար իրար կապված յեւ բաժան:

Յես ու դու յեւ շղթայված ենք իրարու,
¹⁰ կարոտավառ յերագում ենք միշտ իրար,
միշտ իրար հետ, բայց միշտ բաժան յեւ հեռու,
աստղերի պես յեւ հարազատ, յեւ ոտար...

1906

⁴ Մեռնում ե որը: Իջավ թափանցիկ
մութի մանվածը դաշտերի վրա.
խաղաղ-անչար ե, պայծառ, զեղեցիկ,
անտրտունը նինջը մահացող որվա . . .

⁵ Պարզ ջրի վրա յեղեգը հանդարտ
անդողդոջ կանգնած ել չի շշնջում,
լռին խոկում են յերկինք, գետ ու արտ,
յեվ վոչ մի շարժում, ու վոչ մի հնչյուն . . .

Յես կանգնած եմ լուռ, անչար ե հոգիս,
¹⁰ Թախիծս խաղաղ, անուրջի նման.
եւ չեմ անիծում ցավերը կյանքիս,
եւ չեմ տրտնջում վիճակիցս ունայն . . .

1903

¹ Յրտահա՛ր, հողմավա՛ր,
դողացի՛ն մեղմաբար
տերեմները դեղին,
պատեցին իմ ուղին . . .

⁵ Ճաճանչները թոշնան . . .
կանաչներս աշնան—
իմ խոհերը մոլար՝
ցրտահա՛ր, հողմավա՛ր . . .

Կրակներս անցան,
¹⁰ ցուրտ ու մեգ ե միյայն . . .
Անուրջներս յերկնածին
զնացի՛ն, զնացի՛ն . . .

1906

¹ Սիրտս ցավում ե անցած գնացած
որերիս համար,
—մեկը շշուկով պատմում ե կամաց,
մեկը իմ հոգին տանջում ե համառ:

⁵ Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ,
մի թովիչ յերազ.
—մեկը իմ սիրտը փշրելով անցավ
ու հեգնությունով նայում ե վրաս:

Սակայն չեմ կարող յես նրան ատել—
սիրում եմ նրան.

¹⁰ —իմ կյանքը մի նուրբ մշուշ ե պատել,
գուրգուրում ե ինձ մի լույս-հանգրվան...

Մեկը իմ սիրտը փշրելով անցավ.
ո, քաղցր արբանք:

¹⁵ —Որհնված եք դուք, սեր, ցնորք ու ցավ,
որհնված եք դուք, յերկիր, յերգ ու կյանք...

1905/6

¹ Լույսն եր մեռնում, որը մթնում.
մութը տնից տուն եր մտնում.
յես տեսա քեզ իմ ճամբի մոտ,
իմ մտերիմ, իմ անձանոթ:

⁵ Աղբյուրն անուշ հեքյաթի պես,
իր լույս յերգով ժպտում եր մեզ.
դու մոտեցար մեղմ, համբարայլ,
վորպես քնքույշ իրիկվա փայլ:

Անակնկալ բախտի նման,
¹⁰ հայտնվեցիր պայծառ-անձայն.
անջատվեցինք համր ու հանդարտ.
կյանքի ճամբին մի ակնթափթ..

1903

⁴ Աշուն ե, անձրեւ... Ստվերներն անձեւ
դողում են դանդաղ... Պաղ, միյապաղաղ
անձրեւ ու անձրեւ...

Սիրտս տանջում ե ինչ վոր անուրախ
անհանգստութիւն...

Սպասիր, լսիր. յես չեմ կամենում
անցած լուսերից, անցած հուշերից
տառապել կրկին.

¹⁰ Նայիր, ախ նայիր՝ ցավում ե նորից
իմ հիվանդ հոգին...

Անձրեւ ե, աշուն... Ինչո՞ւ յես հիշում,
հեռացած ընկեր, մոռացած ընկեր,
ինչո՞ւ յես հիշում:

¹⁵ Դու այնտեղ եյիր, այն աղմկահեր
կյանքի մշուշում...
Դու կյանքն ես տեսել, դու կյանքն ես հիշում—
վոսկե տեսիլներ, անուրջների լույս...

Յես ցուրտ մշուշում.

²⁰ Իմ հոգու համար չկա արշալույս—
անձրեւ ե, աշուն...

1906

¹ Ինձ թաղեք, յերբ կարմիր վերջալույսն ե մարում,
յերբ տխուր գգվանքով արեգակը մեռնող
սարերի արծաթե կատարներն ե վառում,
յերբ մթնում կորչում են ծով ու հող...

⁵ Ինձ թաղեք, յերբ տխուր մթնշաղն ե իջնում,
յերբ լուռ եմ որվա աղմուկները զվարթ,
յերբ շողերն են մեռնում, ծաղիկները ննջում,
յերբ մթնում կորչում են լեռ ու արտ:

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
¹⁰ վոր խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք.
Լուլթյո՛ւն, լուլթյո՛ւն, լուլթյո՛ւն անսահման...

1905

⁴ Բյուր մարդոց մեջ,
պաղ մարդոց մեջ,
վորպես տրտում
անապատում—

⁵ մենակություն
մենակություն . . .

Ախ, այս տրտում,
յերկրի ցրտում
անլուր ընկան,
¹⁰ անխոս հանգան
յերկնքի հուշ
յերգերս անուշ:

Յեւ! իմ հոգում,
ցուրտ ու միգում,
¹⁵ խինդը մեռավ,
բախտը մարավ
անվերադարձ,
անվերադարձ . . .

1908

¹ Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ
ու համբա կընկնեմ հավետ միյայնակ-
անխոս կմարի յերեկոն աղոտ,
կպառկեմ դաշտում կանաչ ծառի տակ:

⁵ Կմոռնամ հեռվի աղմուկը ահեղ,
կզգամ համբույրը ուրիշ որերի,
լույս յերազների գիշերը շքեղ
սրտիս անձանդի վայելք կրերի . . .

Հեռավոր մարդոց ցավերը կզգամ,
¹⁰ կարկաչող ջրի լացը կլսեմ.
հողը կգրկեմ, ջերմ կհեկեկամ,
վառ աստղերի հետ անուշ կերագեմ:

Անտուն անցորդից կխնդրեմ յես հաց,
պայծառ աղբյուրի ջուրը կխմեմ,
¹⁵ լայն յերկնքի տակ հաշտ ու սրտաբաց
քնքույշ ծաղկանց հետ խաղաղ կրքնեմ . . .

1907/8

¹ Իմ անվերջ համբի տանջանքից հոգնած՝
յես ննջել եյի վոսկեղեն արտում,
ու հչաց սիրտս վայելքից անկարծ
— թվաց վոր մեկը կանչում ե տրտում . . .

⁵ Յեվ յես արթնացա խընդության ցավից.—
գիշերվա հոմլի եր լալիս դաշտերում,
մութ հեռաստանն եր դժկամ նայում ինձ,
մենակությունն եր քարի պես լուում . . .

1905

¹ Հմայված լուսնի շողերովն արծաթ,
սրտում փայելով անսովոր մի տենչ,
ուրվականորեն շրջում ե անվերջ
տարօրեն լոին լուսնոտը գունատ:

⁵ Լուսնի շողերը թովիչ-խուսափող
ստվերիդ նման յե՛վ հեռու, յե՛վ մոտ,
յես մի լուսնահա՛ր, յես մի խենթ լուսնո՛տ,
դու ցո՛լք, դու ցնո՛րք հավիտյան խաբող:

Իմ մեջ սառել ե հիվանդ մի կարոտ

¹⁰ յեվ չգտնելու տանջանքը մաշող.
յես մի լուսնահա՛ր, դու լուսնկա՛ շող,
դու հավերժաբար յե՛վ հեռու, յե՛վ մոտ . . .

1906



¹ Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
լուռ ու տխուր,
հեզ գունատվող աստղի նման:

Յես գնում եմ տրտում-մենակ,
⁵ անժամանակ
ծաղկից ընկած թերթի նման:

Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
սրտակտուր
լացրդ պահած իմ հայացքից:

¹⁰ Յես գնում եմ լուռ-անտրտում,
բայց իմ սրտում
ցավ ե անվերջ, մահ՞՞ւ կսկիծ . . .

1904

¹ Շուտով կըլռե աղմուկը դաժան,
ու սիրտըս կըզգա քայլերդ փափուկ.
դու նորից կիջնես, նուրբ իրիկնաժամ,
քո խաղաղ մութով զգվող-խուսափուկ:

⁵ Տխուր թեվերդ անծայն կըփռես,
կըզրկես հողը կանացի նազով,
յերկընքում անուրջ աստղեր կըվառես,
կըլցնես հոգիս անուշ յերազով:

Յուրտ ցերեկներից հավիտյան դժգոհ՝
¹⁰ սիրտս կարոտ ե քո զգվանքներին.
դու ինձ չես խաբում, քնքույշ յերեկո,
անուշ յերեկո, մեղմ ու մտերիմ . . .

Կընստեմ անվերջ, կընստեմ մենակ.
դու կըփարվես ինձ թեվերով ճկուն,
¹⁵ քնքույշ կըզգվես հույս ու հիշատակ,
կըպարզես մեղմիկ ցուրդդ իմ հոգուն:

1907

⁴ Դու անհոգ նայեցիր իմ վրա
ու անցար քո խաղով կանացի.
յես քեզնից դառնացած հեռացա,
յես քեզնից հեռացա ու լացի . . .

⁵ Իմ հոգին ծովերում անծանոթ
մենավոր ու մոլոր մի նավակ,
մատնեցի փոթորկին աղմկոտ,
հուսաբեկ, թողած դեկ ու թիյակ . . .

Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
¹⁰ չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան.
միայն հողմն ե տխուր շառաչում,
անթափանց մեզ-մշուշ և միայն . . .

1905

¹ Նա ուներ խորունկ յերկնագույն աչքեր,
քնքույշ ու տրտում, վորպես իրիկուն.
նա մի անծանոթ յերկրի աղջիկ եր,
վոր աղոթքի պես ապրեց իմ հոգում:

⁵ Նրա ժպիտը մեղմ եր ու դուղբոջ,
վորպես լուսնյակի ժպիտը տխուր.
նա չունեց խոցող թուլանքը կնոջ.—
նա մոտենում եր վորպես քաղցր քույր . . .

Իմ հուշերի մեջ ամենից պայծառ,
¹⁰ իմ լքված սրտի մաքուր հանգրվան
քույր իմ, դու չրկաս, քույր իմ, դու մեռար,
ու քեզ հետ հոգուս լույսերը մեռան . . .

1904

- ¹ Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
 յերեկոն վառեց լույսեր դժգունակ.
 մութը հյուսում ե տրտմության ժանյակ,
 ծաղիկներն անուշ բույր են բուրվառում.
⁵ — իմ սիրտը տրտմում, իմ սիրտը մենակ . . .

Մեռած լուսնյակը մենակ ու աղոտ
 սփռում ե շուրջը իր շողերը ցուրտ.
 հավետ լուծ ե մի տխուր խորհուրդ,
 վառվում ե հավետ մի անանց կարոտ.
¹⁰ — սիրտ իմ ցնորող, սիրտ իմ անհագուրդ . . .

Տխուր ու մենակ լուսնյակն ե վառվում,—
 իմ սիրտն ե լալիս մենակ ու ցավոտ.
 լուսնյակն արեվի ըստվերն ե աղոտ,
 արեվի ցոլքն ե լուսնյակը տրտում.
¹⁵ — Փառքիդ ստվերն ե իմ կյանքը կարոտ:

1907

- ¹ Ունկնդիր յեղա հողմի խենթ յերգին,
 — անամոք ցավի սրտմաշո՛ւկ նվագ.
 կանգնած եմ մռայլ վիհի յեզերքին,
 — տրտում ե հոգիս, հիվանդ ու մենակ . . .

⁵ Անվերջ մի ցավ ե իմ սիրտը ճնշում,
 — յես մոռացել եմ արեվի ուղին.
 անուրջ որերի լույսը չեմ հիշում.
 — ինձ ո՞վ ե մատնել այս մառախուղին . . .

Ունկնդիր յեղա հողմի խենթ յերգին.
¹⁰ — յես ել եմ ուզում հեկեկալ անհագ.
 կանգնած եմ մռայլ վիհի յեզերքին,
 — տրտում ե հոգիս, հիվանդ ու մենակ . . .

1904

¹ Կապույտ յերկնքի վոսկեղեն աստղե՛ր,
ծեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան.
ասացե՛ք, արդյոք նա ե՞լ թախծո՞ւմ եր,
արդյոք տրտո՞ւմ եր նա ել ինձ նըման:

⁵ Խորհրդագետնե՛ր, դուք տեսնում եք միշտ.—
արդյոք մենա՞կ եր նա ել ինձ նըման,
թե ընկեր գտած ժպտում եր անվիշտ
յեվ փայփայում եր, յեվ սիրում նրան:

Խորհրդագետնե՛ր, դուք ժպտում եք լուռ,
¹⁰ դուք լուռ ժպտում եք իմ ցավի վըրա.
—նա քեզ մոռացած՝ վաղուց ամենուր
ծաղրում ե քո խենթ խոսքերը հիմա . . .

Շիրակ 1905

¹ Հրաշք-աղջիկ, գիշերների թագուհի,
ճառագայթող քո աչքերով դու յեկար,
վոսկե բոցով լցրեր հոգին իմ տկար,
հրաշք-աղջիկ, ցնորքների դիցուհի . . . :

⁵ Կախարդ լուսնի հրապուրող շողի պես
դու ժպտացիր գուրգուրանքով սեթեվեթ,
ազատ սիրտըս շղթայեցիր առհավետ,
հրաշք-աղջիկ, դո՛ւ, միշտ հաղթող ու միշտ հեգ:

Դու մի ցավոտ հիացումի յերգ գիտես,
¹⁰ քո ժպիտում կա խորհուրդի մի փայլանք,
քո աչքերում կա մի անանց զմայլանք.
դու չըմեռնող մի վայելքի խոսք գիտես . . .

Հրաշք-աղջիկ, անհայտ յերկրի մանուշակ,
գիշերային արեգակի ճառագայթ,—
¹⁵ դու իջնում ես, կարող, վորպես մահու խայթ,
քնքույշ, վորպես անդարձ բախտի հիշատակ . . .

1906

¹ Վորպես ծաղիկն ե անխոս գունատվում
ցուրտ շրվաքի մեջ արեվից՝ հեռի,
այնպես թող սերը մեռնի իմ սրտում,
վոր քաղցր կյանքիդ տխրանք չբերի . . .

⁵ Յես լուռ կթաղեմ իմ ցավը միյակ,
զվարթ կժպտամ բախտավորի պես,—
յերբեք չեմ բանա սրտիս մութը փակ,
յերբեք չեմ հայտնի իմ տանջանքը քեզ,

վոր պայծառ ժպտաս կյանքի յերեսին,
¹⁰ վոր վոչ մի տրտունջ սիրտդ չհուզե,
վոր չըմտորես իմ ցավի մասին,
վոր քո թունավոր խոսքը չըկասե . . .

1905

¹ Քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր,
կա քո հոգու մեջ անթափանց մի մութ,
քո մութ հայացքում կա մի քնքույշ սուտ՝
քեզ միշտ թագցնող մի նուրբ վարագույր . . .

⁵ Փակ են քո սրտի հեռուններն իմ դեմ,
հավետ քեզ կապված՝ քեզ ոտար եմ յես.
յերբ խենթ խնդությամբ փայփայում եմ քեզ՝
յեվ սիրում եմ քեզ յեվ քեզ չըզիտեմ:

Փակ են քո սրտի հեռուններն իմ դեմ,
¹⁰ քո աչքերի դեմ իմ աչքերը՝ կույր,
քո հոգու վրա կա մի վարագույր,—
ո՞վ ես դու, ո՞վ ես,—բնավ չըզիտեմ . . .

1904 5

¹ Դու դեռ չես մեռել իմ հիվանդ սրտում,
դու դեռ ապրում ես յերազի նման.
— քայց չե՞ վոր միշտ ել յերազ եր միայն
պայծառ պատկերըդ այս անապատում . . .

⁵ Յես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել,
յես ամենուրեք քեզ եմ վորոնում.
դո՛ւ, յերազների լուսե որրանում՝
անո՛ւրջ, վոր գուցե բնավ չես յեղել . . .

Քեզ իմ կարոտի կսկիծն ե վառել
¹⁰ յերազանքներում իմ նվիրական.
իմ քույր, իմ դահիճ, իմ սուրբ սիրեկան,
յես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել . . .

1908

¹ Յես անջատված եմ հայրենի հողից,
հայրենի տունը՝ իմ սրտին ոտար.
ինձ այրում ե միշտ մի անհագ թախիժ,—
հավիտյան դյուլթող անհայտ ճանապարհ . . .

⁵ Հուզվում եմ, հոսում հեղեղները մեծ,
մազցում վերել յեվ թավալվում ցած,
զմբուխտե ջրեր, ձեզ ո՞վ վրդովեց,
հայրենական տո՛ւն, հավետ մոռացված . . .

Մի յեմլույն ե ինձ Հյուսիս թե Հարավ,—
¹⁰ մի խենթ տազնապ կա իմ հիվանդ սրտում,
կա իմ հոգու մեջ մի անհագ ծարավ.
— հավիտյան ոտար, հայրենական տո՛ւն . . .

1908

⁴ Տխուր մեռան կապուտաչյա
 յերազները յերկնաշող.—
 զազաթներից յես ցած իջա
 անդունդները սիրտ մաշող . . .

Եւ վոչ մի թեւ ինձ չի տանի
 դեպի բարձունքն արծաթյա.
 —Խենթ անկումիս գերեզմանի
 խավարներում ինձ զթա' . . .

⁵ Ցուրտ եւ դարձյալ մութ իմ ուղին,
 սրտումս մահ յեւ աշուն.
 մոռացել եմ յես ամենքին,
 միայն քեզ եմ յես հիշում . . .

Միշտ քեզ եմ յես աղոթում,
 քո հրաշքին անպատիր.—
 հայտնվի՛ր սեւ անապատում—
 ամոքի՛ր ու ազատի՛ր . . .

1905/7

⁴ Կրկին հնչում ե թունավոր լեզուդ
 յեւ քո խոսքերի նիզակները սուր,
 յեւ քո համբույրը, վորպես քաղցր սուտ.—
 բախտ են խոստանում իզո՛ւր յեւ իզո՛ւր . . .

⁵ Իմ մեջ մարել ե մի լույս արեգակ,
 մահու գիշերն ե մթնել իմ հոգում,—
 մի՞թե դու պիտի վառես նոր փափագ,
 մի՞թե դու պիտի հրդեհես հուզում . . .

Կանգնել ես, վորպես անհաղթ հրապույր,
¹⁰ մոտեցար ահա կարող ու խոնարհ,
 մթնում բորբոքվեց մի արնոտ համբույր,
 մեղքի պես թովիչ, ցավի պես խելառ:

Ոձեղեն մարմնով փարվել ես կրծքիս,—
 յեւ քո ցանկության ահեղ փոթորկում
¹⁵ անեծք ե թափում անկարող հոգիս
 յեւ անհույս ճշում քո թունոտ գրկում . . .

1908

¹ Յերբ պայծառ որդի տխուր կմթնի,
յեւ սիրտըդ կայրե թունավոր կասկած,
վհատ սոսկումի տանջանքով կըզգաս,
վոր վորոնածըդ բնավ չես գտնի . . .

⁵ Բայց դու կըզնաս, ո՛ր, դու չես կանգնի,
վերջին լույսերը մեղմ կըվախճանեն,
վերջին հույսերդ կըղավաճանեն,—
դու վորոնածդ բնավ չես գտնի . . .

Յեւ յերբ չի մնա վոչ մի հույս զաղտնի,
¹⁰ սիրտըդ կըճլա, արդյոք ո՞ւր ես, կա՞ս,
հողը կըզորկես յեւ կըհեկեկաս.—
վո՛չ,—կարծազանքովի,—բնավ չես գտնի . . .

¹ Քո հայացքը մոգական
բորբոքում ե քաղցր դող,—
պարուրի ինձ կուսական
հուզումներով քո դյուլթող:

⁵ Ինձ փաթաթիր վորպես ամպ՝
մութ աչքերըդ մեղմ փակիր,
ժպտա՛ կրքոտ բերկրությամբ,
անցավ կյանքըս խորտակիր...

Արյունոտի շուրթերն իմ,
¹⁰ սիրտըս խայթիր՝ ծիծաղիր.
Թող աչքերըս հեզ մեռնին,
կյանքս մարիր ու փախիր:

Քո հայացքը մոգական
բորբոքում ե քաղցր դող,—
¹⁵ պարուրի ինձ կուսական
հուզումներով քո դյուլթող . . .

¹ Կա խորհրդաւոր մի հրապուրանք
քո շարժումների անխոս զրույցում,
ինչ վոր ոճային ինքնահիշացում
յեւ դեպի հողը ինչ վոր քամահրանք :

⁵ Մի այլ յերկրային յերաժշտութեան
յեւելեցների պըրանքն եւ հիշում,
քո շարժումները աշտթը են շարժում,
քո շարժումները յեւ կան յեւ չըկան . . .

Յերկրում են սնված, բայց վոչ յերկրային
¹⁰ արբեցումներ են նոքա խոստանում,
մի այլ տանջանքի յեղեմ են տանում,
մատենելով հոգիս չարքերի խաղին . . .

1905

¹ Մանկութ ընտրեցի ճամբորդական ցուպ,
թողի հայրենի տնակըս ավեր,—
ահա յես հիմա, մի մոլոր ասուպ,
յես կույր եւ հիմա, մոայլ ու անսեր:

⁵ Պայծառ ըղծերը ինձ զուր մաշեցին,
չըվողջունեց ինձ վոչ մի արշալույս,
ինձ լուռ մոռացան, ինձ չըհիշեցին,—
իմ սրտում մնումն սեր, ցնորք ու հույս:

Յես կույր եւ հիմա, անբախտ ու մենակ—

¹⁰ հավերժում կորած մի մոլոր ասուպ.
սահում ե կյանքը հյուսելով ժանյակ,
անցնում եւ վիհեր, լեռներ յերկնահուպ,
ինձ համար չըկա ժամ ու ժամանակ,
յես մի մոլորված, մի տխուր ասուպ . . .

1907

¹ Անանց կարոտն ե իմ սիրտը տանջում
— արդյոք ո՞ր ես դու, արդյոք ո՞ր ես դու.
քո անուշ ծայնն ե հնչում ու կանչում,
— բայց դու անհաս ես, հավիտյան հեռու . . .

⁵ Յեղնում եմ դարձյալ անվերջ նանապարհ,
— կըժպտամ արդյոք, լուսեղեն յերազ.
կըցընեմ սրտիս թախիծը խավար,
կընետեմ անուշ ցուրերըդ վրաս . . .

Թափառում եմ ու կարոտով կանչում,
¹⁰ — արդյոք կըգտնեմ աշխարհում անհուն,—
բոլոր խոտերում քո ծայնն ե հնչում,
բայց անհայտ ես դու, դու չունես անուն . . .

1908

Il pleure dans mon cœur
Comme il pleut sur la ville..
Paul Verlaine

¹ Կրկին իմ հոգում
իջավ մշուշոտ, արցունք անձրևովո՞ղ
տրտում իրիկուն.
իմ սրտում անցավ
մահացող ծաղկանց բույրը ցավ բերող,
համբույրը խոնավ.

⁵ Կրկին պաղ միգում
ամպոտ յերկինքը մեռած լույսերի
թաղումն ե սգում:
Հողմը սրարչավ
հոգուս դալկացած ծաղիկ հույսերի
թերթերը տարավ . . .

Անջատման ցավոտ
ծայներ դողացին ու հեզ դալկացան
¹⁰ հեռվում անձանովթ.
կրակներն անծայն
լացող ամպերի միգում անսահման
թռչնեցին, անցան . . .

Անձրևի՞ն անընդհատ
մաղում ե վհատ թաղումի կոծով,—
¹⁵ տխուր, յուսահատ . . .
իմ հոգու մեջ ե՛լ
աշուն ե իջել անամոք լացով,
իմ հոգու մեջ ե՛լ . . .

1907

¹ Խաղաղ գիշերով դու կըգաս ինձ մօտ,
քնքույշ ձեռներդդ յես կըհամբուրեմ,
կըցրեմ կյանքի հուշերը ցավոտ
ու հեքլաթային լույսեր կ'առնեմ . . .

Յերկար մազերդդ կարճակես ազատ,
⁵ հիվանդ գլուխդդ կըղնես կրծքիս,
կըլինես քնքույշ, մոտիկ, հարազատ,—
անուշ խոսքերով կըղյուծես հոգիս . . .

Պայծառ աշխարհում կըլինենք մենակ,
¹⁰ ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված,
կերպենք անհուշ, անվերջ ու անհագ,—
հեքլաթ աշխարհում առհավետ կապված . . .

1906/7

¹ Վոչ տրտմ'ւնջ, վոչ մրմն'ւնջ սգավոր,
հեռացի'ր, մոռացի'ր ինձ հավետ,
իմ ուղին միշտ մի՞թին, մենավոր,
կըզնամ իմ դժկամ ցաւի հետ:

⁵ Իմ ճամբան՝ անլախճան մի գիշեր,
ինձ շոյող վոչ մի շոյ չի ժպտաւ.—
հեռացի'ր, մոռացի'ր, մի՞ հիշիր,
ինձ այդպես, քրոջ պես մի՞ գիթա . . .

Հուսաբեկ, մութ ու մեզ թող լինի,
¹⁰ իմ վերեւ թող արեւ չըլնողա.
լոկ յիրկունք, լոկ արցունք թող լինի,
ինձ այդպես, քրոջ պես մի՞ գիթա . . .

1905

¹ Իմ գերեզմանին դուք չըմոտենաք,
հարկավոր չե ինձ վոչ ծաղիկ, վոչ սուգ.
հանկարծ կըզարթնի ջերմ լալու փափագ
սիրտըս չի գտնի վոչ մի արտասուք:

Իմ գերեզմանը թող լինի հեռավում,
⁵ ուր մահացել են շշուկ, յերգ ու ձայն.
թող շուրջըս փովի անանց լոռի թյուն,
թող ինձ չընիշեն, թող ինձ մոռանան:

Իմ գերեզմանին դուք չըմոտենաք,
¹⁰ թողեք, վոր հանգչի իմ սիրտը հոգնած,
թողեք, վոր լինեմ հեռավոր, մենակ.—
չըզգամ վոր կա սե՛ր յեվ ցնո՛րք, յեվ լա՛ց . . .

¹ Քնքույշ յերազով պանուծիր հոգիս,
նստիր մահնիս մոտ ու տխուր յերգեր,
մազերըդ փոփր հոգնատանջ կրծքիս
ու մեղմ փայլալիք սիրտըս տարագիր:

⁵ Ոտար դաշտերի անանց մշուշում
տխուր լոռի թյան գիշերն ե իջել.—
իմ սիրտը հավետ թախիծն ե մաշում,
մի լուսե յերգ ե իմ հոգում ննջել . . .

Քո պայծառ զահից մեղմորեն իջիր,
¹⁰ մազերըդ փոփր հոգնատանջ կրծքիս,
անուշ յերազով սիրտըս պանուծիր,
ցնորք հուշերով ամոքիր հոգիս . . .

⁴ Չարտասանված տխուր խոսքեր,
վոր դողում եք անպատասխան,
յես սիրում եմ, տխուր խոսքեր,
ծեր թրթիռը կախարդական:

Խենթ հուզումի անուշ խոսքեր,
պաղ մարդոցից խորը պահված,
անշատման պես տխուր խոսքեր,
հոգուս լույսեր մթնշաղված . . .

Դուք այրում եք, սիրո խոսքեր,
¹⁰ կարոտիս պես սիրտըս մորմոր,
ծեզ չի գգվի, տխուր խոսքեր,
ցուրտ աշխարհում վոչ վոր, վոչ վոր . . .

Չարտասանված տխուր խոսքեր,
դուք չե՛ք մեռել, դուք չե՛ք մեռնի,
¹⁵ դուք այրում եք, սիրո խոսքեր,
վորպես խայթը սեվ յեղեռնի . . .

1904

¹ Յես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
յերբ ամեն ինչ յերազում ե հոգու հետ,
յերբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,
ցնորում ե կապույտ մութի աշխարհում . . .

⁵ Չըկա վոչ մի սահման դնող պայծառ շող,
աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող.—
հիվանդ սիրտը չի տրտնջում, չի ցավում,
վորպես յերազ մոռացումի անծավում.
յեվ թվում ե, վոր անեզր ե ամեն ինչ—

¹⁰ վոր վողջ կյանքդ ե մի անսահման քաղցր նինջ . . .

1904/5

¹ Յերեկը լսեց . . . Յերկինքը վառեց վոսկե բուրվառներ,
լույսերը քնքույշ գրկեցին անուշ յերկինք, ծով ու հող.
— Եւ, յեթե մեկը իմ հոգին այդ մեղմ լույսերին խառներ
յեւ փայփայեր իմ հոգնատանջ սրտի թախիծը մաշող...

⁵ Լքված իմ հոգին տանջում ե կրկին տանջանքը մոռլւ,
յեւ անուն չունի տանջանքը սրտիս, տենչանքը զաղտնի.
— Եւ, յեթե մեկը իմ սրտին նետեր նոր հույսերի փայլ,
մեղմաբար ասեր, քնքույշ համոզեր, վոր նա կրգտնի...

¹ Յերեկոն փռեց իր թեւերը մութ,
անուշ նիրհեցին յերկինք ու յերկիր.—
աչքերըդ փակիր, ինձ քնքույշ գրկիր,
սուտ կյանքին խառնիր յերազանքը սուտ:

⁵ Լալն ըստվերները ընկան անաղմուկ,
անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ . . .
Յեւ քեզ կը պատմեմ վոսկե հեքլաթներ,
իմ սիրուն մանուկ, իմ քնքույշ մանուկ . . .

Կրծքիս ղեր ղեմքը քո տխրադալուկ,
¹⁰ մոռացիր կյանքի տառապանքը մութ,
սուտ կյանքին խառնիր յերազանքը սուտ,
իմ սիրուն մանուկ, իմ քնքույշ մանուկ . . .

Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ,
ննջեցին անուշ յերկինք ու յերկիր.
¹⁵ աչքերըդ փակիր, ինձ քնքույշ գրկիր,
յեւ քեզ կը պատմեմ վոսկե հեքլաթներ . . .

¹ Դու քնած ես քո տաքուկ անկողնում
 յնվ արեւի բախտի յերազ ես տեսնում.
 դուրսը բքաբեր քամին ե վռոնում,
 դու ու լուսամուտ ձյունով ե լցնում . . .

² Դու քնած ես քո տաքուկ սենյակում,
 իսկ յես ցուրտ ծմրան բուք ու հողմի մեջ
 խենթ հեկեկանքով դռներն եմ թակում,
 քո փակ դռները ակվերջ ու անվերջ:

Դու ինձ չես տեսնում լուսն յերազում,
¹⁰ դու ինձ չես լսում ծմրան փոթորկում,
 յես մութ գիշերում քեզ եմ յերազում,
 բուք ու հողմերում յես քեզ եմ յերազում . . .

1907

⁴ Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ եր, առու . . .
 Հերյաթի պես եր—յերազի նման.
 խաղաղ յերեկոն խոսում եր անձայն,
 արդյոք հիշո՞ւմ ես.—հեռո՞ւ յեր, հեռո՞ւ . . .

⁵ Արդյոք հիշո՞ւմ ես. յերկիրը պայծառ,
 ժպտում եր սիրով հավիտենական.
 զարունն էր յերգում ծայնով դյուրեկան,
 արդյոք հիշո՞ւմ ես. առու յեր, անտառ . . .

Արդյոք հիշո՞ւմ ես. գիշերն եր զալու,
¹⁰ հերյաթի պես եր . . . Անտառ եր, առու . . .
 Արդյոք հիշո՞ւմ ես. հեռո՞ւ յեր, հեռո՞ւ.
 Կյանք, տխուր հովիտ հավիտյան լալու . . .

1905

⁴ Յես չըզիտեմ՝ ո՛ւր են տանում հեռավոր
ուղիների ժապավեններն անհամար,
յես նստում եմ համբի վրա ամեն ուր
յեվ աղթեմ, յեվ թախծում եմ քեզ համար:

⁵ Յեվ իմ մոլոր ուղիներում, ո՛վ գիտե,
գուցե մի ուր դու յերեվաս լուսերես.
գուցե ժպտաս քո խոսքերով արծաթե
յեվ մութ սրտիս նոր խնդության լույս բերես:

Ոճանման վոլորումով հեռախոյս

¹⁰ ինձ կանչում են ուղիները բյուրավոր.
արդյոք ո՞ւր ես, խորհրդավոր արշալույս,
հանդիպումի յերջանկության պայծառ ուր . . .

1908

¹¹ Իմ մոլոր համբին դու անկարծ իջար
քո գիշերային մեղմաշունչ մութով
յեվ զարդարեցիր քո անուշ սուտով
իմ տխուր կյանքի մշուշները չար:

⁵ Սրինգե ձայնըդ հնչեց մութերում
աղբյուրի նրման զվարթակարկաչ.
գարնան խոսքերով կարմիր ու կանաչ
դու ինձ կանչեցիր դեպի քո հեռուն:

Ուրիշ ափերի թովիչ ձայնի պես,
¹⁰ քո շարժումները ուրվականային
ստվերապանույժ իրիկնապահին
շղթայեցին ինձ ողակով անտես . . .

Իրար ձուլվեցին իմ մեջ մահ ու կյանք,
հոգիս մատնեցի քո մառախուղին,
¹⁵ ընդմիշտ որհնեցի անհաստատ ուղին,
ուր փարոսում ես դո՛ւ, քաղցր պատրանք . . .

1908

¹ Սեւ գիշերն իջավ իր անհայտ գահից՝
յեւ մութով լցրեց յերկինք ու գետին,
խավարեց հեռւում փարոսը հետին.—
սասանում եմ յես ջրերի ահից:

⁵ Շողում են, դողում աղմուկով զվարթ,
անխոս քարանում ու նորից խաղում,
անդունդից յելնում, դեմքիս ծիծաղում,
խուլ շառաչում են—լարում են թակարդ . . .

Նավը հեղքում ե ջրի հայելին,
¹⁰ իր ցուրտ աչքերով ծովն ե նայում ինձ,
կտրված եմ յես յերկնից ու հողից.—
իբր թե՛ն ե մանում անխուսափելին:

Գերի յե նավըս անակնկալին,
մութով կտրված յերկնից ու հողից . . .

1907

¹ Հեռավոր, անյել լեռնագագաթներ,
պայծառ արեւի գահեր հիյասքանչ,
սիրտըս մեռնում ե, լեռնագագաթներ,
ներքեւում նիրհող դաշտերում կանաչ:
⁵ Իմ յերագները ձեր գիրկն են թռչում—
բարձր, դեպի վեր, արեգակին մոտ,
ուր խենթ բոցերի խուրձեր դողդոջուն
լուռ թալկանում են յերկնում անաղոտ:
Հեռւ, ո հեռւ այս ունայնաշունչ
¹⁰ տխուր դաշտերից, հանդարտ ու անկյանք.—
գրկի՛ր ինձ անյել գագաթների շունչ,
սիրտըս բորբոքի, բարձրության բերկրանք:
Թող իմ աչքերը լույսից կուրանան,
թող սիրտըս լցվի արեւի բոցով.
¹⁵ —ո յերջանկություն անյել բարձրության,
—լուսեղեն յերկնի անեզրական ծով . . .

1907, 8

Քո պայծառ գահի անհաս բարձունքից
Մի մերժիր սրտիս աղոթքը անբիծ . . .
Սաֆո

¹ Յես ընկա անդունդները խավար,
—իմ ցնորք, նորից բեզ եմ կանչում.
մոռացա ուղիներըս պայծառ,
իմ սրտում դառը մութն ե շնչում:

² Դու անմութ աշխարհում ես ապրում,
հիշի՛ր դու խավարում տանջվողին,
քո սրտում արեվներ են վառվում,
արեվի՛ր սեվ կյանքիս մութ ուղին:

Հավիտյան ինձ քո սերն ե այրում,
³ դու լուսեղ . . . Ինձ խավարն ե ճնշում:
Յես մեռնում եմ այս մութ վիհերում . . .
Հեռավո՛ր, քեզնից չեմ տրտնջում . . .

1904/5

¹ Մռայլ թաղումի ջահերի նըման
մեկը աստղերն ե վառում տխրությամբ.
իմ հոգու վրա իջել ե մի ամպ.
իմ սրտի պայծառ ծաղիկներն ընկա՛ն:

² Հիվանդ քնքշությամբ յերկինք ե պարզում
մեռնող ծաղիկը իր բույրը վերջին.
իմ ջերմ աղոթքի խոսքերը չնչին—
հեռավո՛ր, քեզնից սեր չեն աղերսում:

Իմ սրտում միայն սառած հեկեկանք,
³ բայց արցունք չըկա իմ սեվ որերում.
մեռնում ե սիրտըս անհուն խավարում,
յեվ դու կա՞ս արդյոք, լուսե անըջանք . . .

⁴ Մի որ առհավետ կյանքս կանխեմ
 ու գունատ հույսի քայլերով տարտամ
 կը գտնեմ ուղին հեռավոր քո տան
 յեվ թույլ ձեռներով դուռըդ կը ծեծեմ:

⁵ Տխուր կը ժպտաս դու հոգնածորեն
 ու հոգնածորեն դուռը կը բանաս.—
 սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,
 յեվ արցունքներդ հանդարտ կը ծորեն:

Յեվ գթությունը քո քրոջական
¹⁰ սիրտըս կը լցնե խնդության լուսով,
 քո սուրբ ծնկները կը գրկեմ հուսով,
 յեվ կը հեկեկամ, յեվ կը հեկեկամ . . .

25 հունվարի 1908

¹² Ձմրան գիշերն ե մեղմորեն ընկնում
 յեվ մեծ քաղաքի դեմքը մշուշում.—
 յես դուրս եմ գալիս, փողոց եմ գնում
 յեվ յերկա՛ր, յերկա՛ր մայթերն եմ մաշում:

⁵ Բարձր տների պատուհաններում
 պայծառ լույսերը հանգչում են մեկ-մեկ.
 յես արդեն վոչինչ չեմ մտաբերում
 ինձ համար չրկա այսօր ու յերեկ:

Կես գիշերն անցավ . . Յես տուն չեմ գնում.
¹¹ յերկար, անդադար, մայթերն եմ մաշում.
 շրջում եմ անվերջ, յերբեք չեմ հոգնում,
 վոչինչ չեմ հիշում, վոչինչ չեմ հիշում . . .

Լապտերը միգում մաղում ե պաղ բոց,
 յես աննպատակ շրջում եմ անվերջ.
¹⁵ յես լուռ անցնում եմ փողոցից փողոց
 ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ:

2 մեռ., 1907/8

⁴ Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
ամենին մոռանալ.
Հըսիրել, չըխորհել, չափսոսալ—
հեռանալ . . .

Այս տանջող, այս ենչող ցավի մեջ,
գիշերում այս անշող
արդյոք կա՞ իրիկվա մոռացման,
մոռացման վոսկե շող . . .

⁵ Մի վայրկյան ամենից հեռանալ,
ամենին մոռանալ.—

խավարում, ցավերում քարանալ
մին-միայն . . .

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
ամենին մոռանալ.

Հըսիրել, չըտենչալ, չըկանչել,
հեռանալ . . .

1908

⁴ Ոտար յերկնքի կամարների տակ
յերագիս տեսա մի չքնաղ աղջիկ.
յես՝ մի աղքատ մարդ մոլորաշրջիկ,
նա՝ յերկնից թռած լուսե հրեշտակ . . .

⁵ Յես ընկած եյի ոտար աշխարհում,
անարեւի յերկնի կամարների տակ,
մեկը փայում եր իմ սիրտը մենակ
յեւ իմ մութ հոգում լույսեր եր վառում:

Մեղմ ու սիրագին ժպտում եր նա ինձ
¹⁰ ոտար կողմերում, լայն ճամբի վրա,
յես լսում եյի խոսքերը նըրա
յեւ անուշ լալիս իմ անուրջ բախտից . . .

1906

⁴¹ Արդյոք նորից յերազներն են թափառում,
սիրո անուշ նվազներն են ինձ կանչում.
— դալուկ աշնան տխուր շողերն են մարում,
սարից իջնող աղբյուրներն են կարկաչում:

⁵ Յես լսում եմ հիյացմունքի մի շշուկ,
արդյոք դո՞ւ յես նորից հոգիս մեղմ հուզում.
— այն գիշերն ե, այն հուշերն են տրտմաշուք,
այն աստղերն են ցուրտ յերկնքում յերագում:

Յես ընկած եմ անծայր դաշտում միյայնակ,
¹⁰ յերազներըս, յերազներըս վոր անցան.
արդյոք դո՞ւ յես գիշերի պես հերարձակ,
գիշերի պես խորհրդավոր, դյուլթական.
— դալուկ աշնան մերկ անտառն ե շառաչում,
լույս հուշերի վտակներն են կարկաչում . . .

1905

¹¹ Սեվ գիշերն ե գրկել ինձ, մութն ե պատել իմ ուղին,
քեզ եմ կանչում յես նորից, իմ հեռավոր, իմ անգին...

Յես մոլորված մի կրակ, յես անհաստատ մի հոսանք,
վիհներ, վիհներ անհատակ—տրտմություն ու փսոսանք:

⁵ Ոտար յերկիր, ոտար հող, թախիծով լի յերազներ,
անըջանքներ մեղմ մարող, անվերադարձ հիյացքներ:

Քաղցր ե մութը քո գրկում, լույսը սեվ ե առանց քեզ,
այնպես մեղմ ես դու զգվում, դու լուսեղեն ես այնպես.

Դու իջնում ես վորպես հուշ, վորպես ուրիշ կյանքի լույս,
¹⁰ քո հայացքում կա անուշ մեղմություն ու արշալույս:

Սեվ գիշերն ե գրկել ինձ, մութն ե պատել իմ ուղին,
քեզ եմ կանչում յես նորից, իմ հեռավոր, իմ անգին...

1907/8

⁴ Դժկամ նայում են ժայռերը խոժոռ,
տխուր խաղում են ալիքները ժիր.—
ընդունիր հոգիս մոլոր, մենավոր,—
վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր:

⁵ Սողում են դանդաղ որերը ածիր,
կորած ե մթնում մոլոր իմ ուղին.—
քնքույշ խոսքերով թախիժըս ցրիր,
անխոս ամոքիր ցաված իմ հոգին:

Մի անմեռ ցավ կա յերկրում այս տխուր,
¹⁰ մի ցուրտ, հոգեմաշ հուսահատություն,
կորցրած հավետ յեվ յերազ յեվ հուր,
յես վերջին անգամ քեզ եմ աղոթում:

Դժկամ նայում են ժայռերը խոժոռ,
տխուր խաղում են ալիքները ժիր.
¹⁵ փալփայիր սիրտըս հավետ մենավոր,
վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր...

1905

⁴¹ Քո մազերի ցնորական փայլը պայծառ,
ժայռից իջնող ջրվեժի պես առատահոս.
քո աչքերի խորությունը հրդեհավառ,
ուր վառված են մութ ցանկություն ջահեր անխոս.
⁵ Քո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի նրման,
վոր տիրաբար արբեցնելով մահ ե բերում,
քո խենթ մարմնի սարսուռները յերջանկություն
ախտաբորբոք արեմներ են բոցավառում...
Թույլ տուր սուզվեմ քո աչքերի անդունդը մութ,
⁴⁰ թույլ տուր ծծեմ քո մազերի բուրմունքն անուշ,
բորբոքիր ինձ քո հույզերով բաղցր ու անգութ,
մարիբ իմ մեջ, մարիբ իմ մեջ ցնորք ու հուշ...

1905/6

- ⁴ Դյուլթեցին ինձ քո մագերը ալեծածան
յեւ աչքերիդ խորութիւնը խորախորհուրդ.
յեւ քո քնքույշ ժպիտների խոսքերն անծայն
գիշերեցին իմ հոգու մեջ մի քաղցր մութ . . .
- ⁵ Դյուլթեցին ինձ իրենց խաղով լուսակարկաչ
քո խոսքերի զանգակները զվարթածայն.
շուրթերդ—վարդ բոցավառված են իմ առաջ
ցանկութիւնով արյունատենչ ու մեղսական:
Մութ ցանկությամբ յեսքո կանչող գիրկն եմ ընկնում,
¹⁰ նետում եմ ցած վեհ բարձունքից հոգիս հպարտ,
քո գրկում կա սիրուց անուշ մի հիյացում,
քո խավարում—մոռացության մի ակնթարթ . . .

- ⁴ Կյանքը լոռւմ ե, աղմուկը մնոնում.
մի անծանոթ ձեռք նուրբ մթնշաղում
անցյալն ու ներկան իրար ե խառնում,
իմ սրտում վոսկե անձրեւի ե մաղում:
- ⁵ Մի քնքույշ լույս կա իմ հոգու համար—
ամեն ինչ ունի չըմենող մի կյանք,
կա խորհրդավոր դյուլթող մի խավար,
ուր բախտից քաղցր են տրտունջ ու տխրանք:
- Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում,
¹⁰ վերհուշերի մեջ—մի անսուտ դրախտ,
մի անանց վայելք, անխաբ հիյացում—
կյանքից գեղեցիկ ցնորական բախտ . . .

⁴¹ Գարունը այնքան ծաղիկ և վառել,
զարունը այնպե՛ս պայծառ և կրկին.
— ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
ուզում եմ անուշ փայփայել մեկին:

⁵ Այնպե՛ս զգվող և յերեկոն անափ,
ծաղիկներն այնպես նազով են փակվում.
— շուրջըս վառված և մի անուշ տազնապ,
մի նոր հուզում և սիրտըս մըրկում . . .

Անտես զանգերի կարկաչն եմ լսում,
⁴⁰ իմ բացված սրտում հնչում և մի յերգ.
— կարծես թե մեկը ինձ և յերազում,
կարծես կանչում և ինձ մի քնքույշ ձեռք . . .

1908

¹ Ապրելուց քաղցր և մեռնել քեզ համար,
զգալ վոր դու կաս յեվ լինել հեռու,
յերկրապեղ քեզ առանց սիրվելու,
յերազել միշտ քեզ—լինել քեզ ոտար . . .

⁵ Ստվերըդ փնտռել ամեն տեղ, ուր խենթ
հոգին կարող և թոխքով չափել.
անանց կարոտում անվերջ տառապել
յեվ լինել քեզնից բաժանված հավետ . . .

Ու գերեզմանում յեվ հողերի տակ
¹⁰ զգալ վոր անցար յեվ քեզ չըկանչել,
յեվ վոչ մի հուշով սիրտըդ չըտանջել,
ու չըխռովել բերկրանքըդ հստակ . . .

¹ Կանչում ես անվերջ
կապույտ հեռվից,
շշուկով անուշ
կանչում ես ինձ:

⁵ Թփերն ես շարժում,
շրշում անուշ
շշուկով պայծառ
ու փաղաքուշ...

Անհայտ ե ուղին
¹⁰ քաղցր յերկրիդ,
ուր բախտ ե անանց,
անանց ժպիտ:

Ուր ծաղիկ ու յերգ
ուրիշ են, այլ,
¹⁵ ուր անմահական
փառք ե ու փայլ:

Այս իրիկնային
կապույտ յերկրում
դու յես միշտ շրջում
²⁰ ու մեղմ յերգում:

Ու կանչում ես միշտ
անհայտ հեռվից,
շշուկով անուշ
կանչում ես ինձ:

¹ Յերբ վարդ ամպերի հրդեհն ե դողում,
իրիկնաժամին նստում եմ մենակ
կանաչ առվի մոտ, ուռիների տակ,
ու հոգնած սիրտըս ել չի դժգոհում:

⁵ Անցած որերի հուշերն եմ թերթում
յեվ խաղաղ սրտով անխռով-մենակ
քնքույշ յերգերից հյուսում եմ մանյակ
վոր պննեմ սիրով պատկերդ տրտում:

Յեվ իմ մութ կյանքի սեփերում դժկամ
¹⁰ յես գիտեմ, պիտի ժպտաս, լուսավոր,
պիտի վողջունես ուղիս հեռավոր.
—սրբազան յերագ, կարոտալի՜ ժամ...

¹ Արդյոք ո՞ր ես դու . . . Ախ, արդյոք դու վոր
ճանապարհների հեռուն ես մաշում.
յերջանի՞կ ես, թե լուռ ու մենավոր
անդարձ որերի գարունն ես հիշում:

⁵ Արդյոք քո սրտում ի՞նչ լույս ե փայլում,
վո՞ր հողն ե զգվում քայլերդ փափուկ,
վո՞ր ջուրն ե արդյոք յուր լույս հայելում
մեղմով փաղաքշում դեմքդ խուսափուկ:

Արդյոք խաղա՞ղ ե սիրտըդ փոթորկոտ,
¹⁰ արդյոք անցյալի լույսերը մեռած
չե՞ն հուզում սիրտըդ, իմ հոգու կարոտ,
իմ քնքույշ սիրած, իմ անդա՛րձ յերազ . . .

¹ Դու գնում ես տուն, յեվ դեռ քո վերջին
խոսքի հնչյունը չի մարել ողում,
անգոր եմ արդեն այս խենթ կարոտում,
յեվ կամքըս թույլ ե, յեվ միտքըս չնչին:

⁵ Խենթացած բեռից այս չար մենության,
յես դուրս եմ վազում քեզ վորոնելու,
տեսնելու ցոլքդ զեթ հեռվից-հեռու
յեվ հսկելու քեզ ստվերի նրման . . .

Այս մութ ժխորում իմ սիրտն ե մաշում
¹⁰ մենակությունը հավիտյան խոցող,
անցնում եմ արագ յես ձեր փողոցով
յեվ խենթ մշուշում վոչինչ չեմ հիշում:

Ձեր դռան առաջ կանգնում եմ յերկար,—
զուցե դու հանկարձ «պատահմամբ» դուրս գաս,
¹⁵ կարոտըս, զուցե, դու հանկարձ զգաս
յեվ հասկանաս իմ հուզումը տխուր:

Սակայն ուզում եմ, վոր ինձ չըտեսնես,
չըգիտեմ ինչո՞ւ ձեր զանգն եմ տալիս,
փախչում եմ . . . փախչում . . . յեվ հեռանալիս
²⁰ փառաբանում եմ, որհներգում եմ քեզ . . .

¹ Իմաստուն խոսքեր սովորեցի յես,
վոր հրապուրեմ զորությամբ մթին,
հոգիդ կախարդեմ ու հմայեմ քեզ,
ինձ այրող հուրը նետեմ քո սրտին:

⁵ Բայց բոլոր խոսքերն իզուր են արդեն,
թալիսմանները մեռած յեւ անուժ,
հրմալք յեւ դյութանք անգոր են քո դեմ...
—արդյոք ո՞վ գիտե անունըդ անուշ...

¹ Իմ խաղաղ յերեկոն ե հիմա
մեղմալույս յեւ տխուր, յեւ անուշ.
քեզ յերբեք սիրտըս չի մոռանա,
իմ մաքո՛ւր, առաջին իմ անուրջ...

⁵ Տարիներ, տարիներ կըսահեն,
կըմեռնեն յերագները բոլոր—
քո պատկերը անյեղձ կըպահեմ
որերում անհաստատ ու մոլոր,

յեւ տանջանք, յեւ բեկում, յեւ թախիժ—
¹⁰ սեւ որեր յես դեռ շատ կըտեսնեմ.
անունըդ թող փարոս լինի ինձ
սուտ կյանքի յեւ դառը մահու դեմ...

¹ Հեռու յես անհաս, իմ լուսե յերազ,
բայց քեզ ե սիրտըս փայփայում թագուն,
փոված ե լույսըդ շուրջըս յեվ վրաս,
անհուն աշխարհում յեվ իմ հեզ հոգում:

⁵ Քո հեռու յերկրի ուղին չբգիտեմ.—
գուցե յես ինքըս ստեղծել եմ քեզ,
աստվածացրել եմ, վոր քեզ աղոթեմ,
հրամայել եմ, վոր վրաս իշխես:

Յեվ քաղցր ե լինել քո կամքի գերին,
¹⁰ քո չարությունը բարիք համարել.—
կրճաբազ յեղնել ընդդեմ քո սրին
յեվ այդ մահաբեր ձեռքը համբուրել...

¹ Հեռու յերկրի լուսե հովտում
որերն ուրիշ յերգ են հյուսում.
կյաքից հոգնած սիրտըս տրտում
այն յերկիրն ե միշտ յերազում...

⁵ Խաղաղությունն այն հեռանիստ,
ուր մի ուրիշ արեվի փայլ
ծավալում ե անանց հանգիստ
յեվ խնդություն մի անայլալ,
մի խնդություն մաքուր յեվ խոր,
¹⁰ յեվ անեզերք, յեվ անվախճան.
ուր քո սիրտը վորք ու մոլոր
զրկում ե մի վոսկե շրջան...

¹ Այսոր նորից պարտիզում
շրջում եյի յեմ հիշում
քեզ արթմնի յերազում,
վոսկի, վոսկի մշուշում . . .

⁵ Դու քո հեռու հեռավոր
անհայտ յերկրում արդյոք ինձ
մտաբերում ես այսոր
այն վոսկեղեն աշխարհից.—

հիշում ես դու ակացյան
¹⁰ յեմ պարտեզը իրիկվա,
հանդիպումը մայիսյան
պատանու յեմ աղջկա:

Յեմ սենյակը ամփոփիկ
յեմ տնակը հեռավոր.
¹⁵ զաղտնիքները մեր փոքրիկ,
սակայն քաղցր, սակայն խոր:

Հիշում ես դու այն արագ
ժամերը, յերբ յես ու դու
նստում եյինք անկրակ.—
²⁰ դյուլթանք սրտի՛ յեմ հոգու՛:

Յեմ խավարում, խավարում
հիշում ես ջերմ շուրթերի
հանդիպումը հրահրուն,—
հուզմունքն արբած սրտերի . . .

²⁵ Յեմ պարտիզում մեր անուշ
տեսակցութունն այն գիշեր,
կիսախավարը քնքույշ.—
ցնորական իմ հուշեր . . .

¹ Դու շրջում ես ամենուրեք, դու չըկաս,
աներեվույթ դու խոսում ես աշխարհում,
հանկարծ, անկարծ շնջում ես, վոր կըգաս,
հըմայում ես, կանչում, կանչում ու լուռ . . .

⁵ Քնքույշաբույր ծաղիկների թերթերում,
լույս դաշտերի խաղաղ նիրհող ովկյանում
յեմ աստղազարդ, խորհրդավոր գիշերում
յեմ ջրերի արծաթաճոճ վորրանում:

Ամենուրեք մի կարոտ ես դու նետել,
¹⁰ քո ստվերն ես փռել անձիր աշխարհում,
դու յես հյուսում աստղացանցը վոսկեթել,
գիշեր ու գոր կյանքը դու յես զարդարում . . .

Յեմ աշխարհի ուղիներում յես մոլոր
